ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով պահանջով ավագանին որոշեց.

Հաստատել նիստի օրակարգը հետևյալ հաջորդականությամբ՝

1. ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ / ԶԵԿ. Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ/
2. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ/
3. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
4.ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 6.2551 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ 1 ՀԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/
5. ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԵՐԻՑ՝ 3.29400 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ՝ 0.93034 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Ռ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486,
urtsadzor90@gmail.com, urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 Նոյեմբեր 2017թվականի N 43-Ն

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում՝ 2018 թվականին գործող տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նա և մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների

համար՝ 7500 դրամ,

բ. Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,

- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2)համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ. Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այնհամարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ:

1-ին , 2-րդ, 3-րդ կետերում կիրառվել է 0.5 գործակիցը:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ 18000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ 15000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1/ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 դրամ,

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 դրամ,

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ.

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.

8) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ. Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30000 դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 150000 հազար դրամ,

դ. Խաղատների համար՝ 300000 դրամ,

ե. Շահումով խաղերի համար՝ 150000 դրամ,

զ. Վիճակախաղերի համար՝ 45000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. Հիմնական շինությունների ներսում՝

1/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

2/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

3/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

4/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

5/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ,

6/ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.

բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

1/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 դրամ,

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի

համար՝ 2400 դրամ,

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

11) Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ,

բ. թունդալկոհոլային (սպիրտիպարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050դրամ,

գ. Սոցիալական գովազդի համար՝զրո դրամ,

դ. Այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ,

ե.դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ:

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150 դրամ,

12) Հայաստանի Հանրապետության Ուրցաձոր համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանումևայլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝օրացուցային տարվահամար՝ 150000 դրամ.

15)համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և

շահագործման թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750000 դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1500000 դրամ,

գ. 7 հա-իցմինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2100000 դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3000000 դրամ:

4-15 կետերում կիրառվել է 0.3 գործակիցը:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխելու, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանները մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 5000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ :

3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար կազմված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝

ա/ աճուրդի դեպքում 5000 դրամ:

բ/վարձակալության մրցույթի դեպքում՝ 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել՝

ա/.Կենցաղային աղբի համար՝փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ:

բ/ Ընտանիքում երեք և ավելի բնակչի դեպքում աղբահանության վճար սահմանել ամսական 300 դրամ:

գ/ առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ,

դ/հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ,

ե/ արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ,

զ/ կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 1 դրամ,

է/ Համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել շաբաթը մեկ անգամ:

5. Սահմանել համայնքի ենթակա կազմակերպություններում ծնողական մուծումների հետևյալ դրույքաչափերը.

ա/ <<Ուրցաձորի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան ՝ 5000 դրամ:

բ/ Ուրցաձորի համայնքային կենտրոնի խմբակներ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան՝ 1000 դրամ: Միևնույն ընտանիքից երկու կամ երեք և ավելի երեխա, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաների համար համայնքային կենտրոնի խմբակներ ընդունվելու դեպքում սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան՝ 500 դրամ: Երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանել 0 դրամ:

6. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 06.12.2016թ. <<Ուրցաձոր համայնքի տարածքում 2017 թվականին գործող տեղական տուրքերի եվ վճարների մասին>> թիվ 12-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2018 թվականի N 44-Ն

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ավագանին որոշեց.

1. Հաստատել Ուրցաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի, <<ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի՝ 2018 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ ըստ հավելված թիվ 1-ի, հավելված թիվ 2-ի, հավելված թիվ 3-ի:
2. Հաստիքացուցակների նոր դրույքաչափերը կիրառել 2018 թ-ի հունվարի 1-ից:
3. Ուրցաձորի համայնքապետարանի, համայնքային կենտրոնի, <<ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի 1974 թվականին և հետո ծնված աշխատակիցներին ապահովել առձեռն 55000 ՀՀդրամ:

4. <<ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի աշխատանքային գործունեության ժամկետը սահմանել 6 ամիս՝ 2018 թվականի ապրիլի 2-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 28-ը ներառյալ:

5. Ուժը կորցրած ճանաչել Ուրցաձորի ավագանու 2017 թ-ի հունվարի 19-ի թիվ 04-Ն և 2017 թ-ի փետրվարի 2-ի թիվ 13-Ն որոշումները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված 1
Հաստատված է Ուրցաձոր համայնքի
ավագանու 21/11/2017թ. N 44-Ն որոշմամբ

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 Թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ _23_
2. աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքի ղեկավար	1	343000
	Հայեցողական պաշտոններ	
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	280000
Համայնքի ղեկավարի օգնական	1	230000
Վարչական ղեկավար /նստավայրը գ. Շաղափ	1	200000
Վարչական ղեկավար /նստավայրը գ. Լանջանիստ	1	160000
	Համայնքային ծառայության պաշտոններ	
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	275000
Համյանքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/2.3-1/	1	270000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	182000
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/	1	182000
Համայնքապետարանի աշխատակազմի 1-՝՝ կարգի մասնագետ /3.2-1/	1	150000
Համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ /3.3-1/	1	120000
	Քաղաքացիական աշխատանք	
Ծրագրերի համակարգող	1	150000
Գործավար	1	120000
Օպերատոր	1	80000
Բնապահպան	1	142145
	Տեխսպասարկման անձնակազմ	
Վարորդ	1	150000
Բեռնատար մեքենայի վարորդ	1	150000
Մեխանիզատոր	1	150000
Գրադարանավար / Հավաքարար	0.5/0.5	72752 / 72752
Պահակ,այգեպան	1	80000
Ջրամատակարար	2	80000
Վարորդ	1	80000

Ուրցաձորի համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Անդրեասյան

Հավելված 2

Հաստատված է Ուրցաձոր համայնքի

ավագանու 24/11/2017թ. N 44-Ն որոշմամբ

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2018 թվական

1. Աշխատակիցների քանակը՝ 17
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքային կենտրոնի համակարգող	1	180000
Տնտեսվար	1	180000
Գեղ. մասվար	1	150000
Օժանդակ բանվոր	3	150000
Հավաքարար	1	100000
Խմբավար /սպորտի-4,արվեստի-6./	8x8 ամիս	72752
Մարզադաշտի այգեպան հսկիչ	1	72752
Մանկապարտեզի հսկիչ	1	72752

Ուրցաձոր համայնքի ղեկավար՝ Ռ.Անդրեասյան

Հավելված թիվ 3

Հաստատված է Ուրցաձոր համայնքի

ավագանու 24/11/2017թ. N 44-Ն որոշմամբ

<<ՈՒՐՑԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2018 թվական

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Մանկապարտեզի տնօրեն	1	180000
Մանկապարտեզի դաստիարակ	4	130000
Մանկապարտեզի դայակ	4	110000
Մանկապարտեզի հաշվապահ	1	130000
Տնտեսվար	1	110000
Խոհարար	1	110000
Լվացարար	1	110000
Երաժշտության դասատու	1	130000
Բուժքույր	1	110000
Օժանդակ և նորոգող բանվոր	1	90000
Խոհարարի օգնական	1	100000
Դռնապահ	1	90000

Ուրցաձոր համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Անդրեասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 45

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 6.2551 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ 1 ՀԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգի 2-րդ կետով Ուրցաձոր համայնքի ավագանին որոշեց.

1. Համաձայնություն տալ Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 6.2551 հա /կադաստրային ծածկագիր՝ 0395-0001/ արոտավայր հողամասը և 1 հա /կադաստրային ծածկագիր՝ 03-095-0001/ հասարակական կառուցապատման հողամասը օտարելու աճուրդ վաճառքի կարգով:
2. Վերոնշյալ հողամասերի օտարման համար մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,(0234)86590 (0234) 86-486, urtsadzor90@gmail.com,
urtsadzor.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբեր 2017 թվականի N 46-Ն

ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԵՎ ՈՒՐՑԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ , և Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ կետով ավագանին որոշեց.

1. ՈՒրցաձոր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող՝ 03-075-0115-0050 ծածկագրում գտնվող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասից ՝ 3.29400 հա հողամասը և Ուրցաձոր համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող՝ 03-095 ծածկագրում գտնվող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասից՝ 0.93034 հա հողամասը առանձնացնել՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՀԵՐ
4. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՒՄ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**